

ԳՐԻԳՈՐ ԱՐՁԱՍԻ ՈՍԿԱՆՅԱՆ

Գիրիծոր, Երևանի Կոմիտասի անվ. պեպրական կոնսերվատորիայի դոցենտ

Անամբլային արվեստը մեծ տեղ են զբաղեցնում Արզաս Ոսկանյանի ամբողջ սրեղծագործական ժառանգության մեջ:

Դեռևս Կիրովականի (Վանաչոր) երաժշտական ուսումնարանում ուսանելու տարիներին (սովորում էր թավջութակի, վոկալ և սրեղծագործական դասարաններում) սրեղծում է դաշնամուրային Տրիոն, որի կատարմանը մասնակցում է, որպես թավջութակահար:

ԱՐՁԱՍ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԼԱՐԱՅԻՆ ԿՎԱՐՏԵՏՆԵՐԸ

Թավջութակահար: Առաջ անցնելով նշենք, որ Երևանի Կոմիտասի անվան պեպրական կոնսերվատորիայի կոմպոզիտորական բաժնի ուսանողական լարային քառյակի կազմում Երվանդ Երկանյանի (1-ին ջութակ), Խաչատուր Մարտիրոսյանի (2-րդ), Մարգիս Ալաջաջյանի (ալտ) հետ Արզաս Ոսկանյանը թավջութակահարն էր: 1970-թվականների սրեղծագործական եռանդուն տարիներին ուսանող կոմպոզիտորները, իրենց կատարումներով որքան հնարավոր էր չգտնում էին ծանոթանալ և ծանոթացնել համաշխարհային կվարտետային գրականության նորասրեղծ ժամանակակից նշումներին:

Կվարտետ սրեղծելու իր առաջին փորձն Ա. Ոսկանյանը կատարել է, երբ ԵՊԿ-ի կոմպոզիտորական բաժնի Էդվարդ Միրզոյանի ղեկավարած դասարանի կուրսի ուսանող էր: Ուսուցչի միջամտությամբ կվարտետը կատարեց հայկական լարային երբևիցե սրեղծված գրեթե բոլոր կվարտետները մեկ փառատրոնի շրջանակում հնչեցրած «Երևան» լարային քառյակը: Չնայած յուրահատուկ շարադրանքի ծիւղերը առկա էին, մեկ մասանի սրեղծագործությունը համարելով էքսպերիմենտալ՝ Ա. Ոսկանյանն այն չի մրցրել կվարտետների ընդհանուր ցանկի մեջ:

1972 թվականին, երբ հեղինակել էր համընդհանուր մեծ գնահատականի արժանացած «Եղիբ ինչքույր» վոկալ շարք, ուշագրավ թավջութակի և դաշնամուրի Սոնատը (հնչեց Ռուստովում մոսկվացի թավջութակահար Լապկինի և ռուսովցի դաշնակահար Գոլոյաբովի կատարմամբ) սրեղծեց իր սրեղծագործական մրաժողովության համար շրջադարձային առաջին լարային Կվարտետը: Այս սրեղծագործությամբ, որ Արզաս Ոսկանյանը կատարեց, հայոց մոնոդիկ երաժշտական մրաժողովության հիմքով, շարադրանքի իր գյուրը:

Երաժշտագետ պրոֆեսոր Մարգարիտ Բրուչյանը գրում է. «Ա. Ոսկանյանն ունի իր գրելածներ, տեխնիկան, ըստ որի ամբողջ կոմպոզիցիան իրենից ներկայացնում է միասնական ամբողջական հնչող մեղեդի, չնայած այն տարածվում է ստեղծագործության «մասնակիցների» միջև, ինչպիսիք են տարբեր գործիքները, երգիչն ու երգչախումբը (երգչախմբի երգաբաժինները. - Գ.Ո.): Ընդ որում մեղեդու այս կամ այն հատվածը, որը հնչում է որևէ «մասնակցի» կողմից, վերջին հնչյունի վրա վերածվում է պահված տոնի (դամի) դառնալով հնչյունային հետք, որի ֆոնի վրա շարունակվում է հաջորդ բաժինն արդեն մյուս «մասնակցի» կողմից: Արդյունքում ծնվում է մեկ մեղեդու յուրատեսակ բազմաձայն ընթացքում ինքնատիպ հարմոնիկ ուղղահայացով» (1.):

Լարային առաջին կվարտետը, որին հեղինակը հեղափոխում Կոմիտասի «Կոմիտաս» անվանումը նույնպես հնչեցրեց «Երևան» լարային քառյակը: Լևոն

Մամիկոնյան՝ 1-ին ջութակ, Մարտիրոս Երիցյան՝ 2-րդ ջութակ, Յուրի Մանուկյան՝ ալտ և Ֆելիքս Միմոնյան՝ թավջութակ կազմով: «Արզաս Ոսկանյանի առաջին լարային կվարտետի երաժշտությունը նոր էջի սկիզբ է կոմպոզիտորական արվեստում», իր կարծիքը այսպես է արտահայտել խոշորագույն կոմպոզիտոր, հմուտ մանկավարժ երաժշտահասարակական եռանդուն գործիչ Ղազարոս Մարյանը:

Լինելով Խորհրդային ամենափիմասպուն մանկավարժներից մեկի՝ Էդվարդ Միրզոյանի ղեկավարած համբավավոր դասարանի սանը (գիրքներ, որ այդ դասարանում են վարպետացել Ա. Տերտերյանը, Ջ. Տեր-Թադևոսյանը, Կ. Օրբելյանը, Խ. Ավետիսյանը, Ռ. Ամիրխանյանը, Մ. Վարդապարյանը և այլք) Ա. Ոսկանյանը տարբեր դասընթացների կրթվելու ճանապարհին շփվում էր այնպիսի հանրաճանաչ կոմպոզիտորների և համբավավոր երաժշտագետների հետ, ինչպիսիք են Է. Բաղդասարյանը՝ հարմոնիստ, Գ. Չեքուրյանը՝ պոլիֆոնիստ, Ա. Տերտերյանը՝ գործիքավորում, Գ. Հովոնցը՝ սոլֆեջյո, Ն. Դերոյանը՝ վերլուծություն, Է. Աղամյանը՝ դաշնամուր, որոնցից յուրաքանչյուրը բացի մասնագիտական խորը գիտելիքներ փոխանցելուց, սրեղծագործող մարդուն բնորոշ անհատականությամբ մեծ ազդեցություն էին բողնում ուսանող կոմպոզիտորի, որպես՝ սրեղծագործող մարդ ձևավորման վրա: Այս առումով անգնահատելի է հայրկապես երաժշտագետ Մարգարիտ Բրուչյանի դասավանդած «Ժողովրդական երաժշտական սրեղծագործություն» առարկայի և կոմիտասագետ-միջնադարագետ Ռոբերտ Աբայանի կատարած դերը, Արզաս Ոսկանյան կոմպոզիտորի, երգչի ուսումնասիրողի, մանկավարժի բազմփիմասպ երևույթի կայացման ճանապարհին:

1975 թվականի ամռանն ավարտելով պարտա-

ԿՎԱՐՏԵՏԱՅԻՆ ԺԱՆՐ-ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ և ԳՆԱՀԱՏՈՒՄ

Երաժշտական ԳԱՅԱՍԱՆ 1(54)2016

դիր զինվորական ծառայությունը Խորհրդային բանակում (1973-1975 թթ.) սկսում է «Կորպորացա» անվամբ իր 2-րդ լարային Կվարտետի աշխարհընկերը: Մինչ այդ, ամուսնացել էր փառանկալոր դաշնակահարուհի, կոնցերտմայստրեր Բնարիկ Տեր-Մինոնյանի հետ, դարձել՝ հայր:

Սրեղծագործությունը հեղինակն ավարտում է 1975 թվականի աշնանը: 1979 թվականին կայանալիք հայ երիտասարդ կոմպոզիտորների գարնանաշին սրուգայտեսի համերգացանկում ընդգրկվում է նաև Ա. Ոսկանյանի 2-րդ լարային Կվարտետը: Այն հանձն են առնում հնչեցնել իրենց գործի խոշորագույն վարպետներ՝ Վիլի Մոկացյանը՝ առաջին ջութակ, Ռուբեն Պողոսյանը՝ երկրորդ ջութակ, Ջարեհ Սահակյանը՝ այլը և Ջոն Գևորգյանը՝ թավջութակ:

«Ինձ համար և հեշտ և դժվար էր շփվել կատարողական արվեստի այդ չորս հսկաների հետ: Չորս ընդգծված անհատականություն, ամեն մեկը միայն իր տեսակով, ոչ մեկը մյուսին չնմանվող: Վիլի Մոկացյանը՝ պոթկուն, Ջարեհ Սահակյանը՝ խորունկ, Ջոն Գևորգյանը՝ ընկալող, Ռուբեն Պողոսյանը՝ հրահրող, բայց բոլորն էլ չափից ավելի բարի, խնայող: Երբ մի հատված հնչում էր այնպես ինչպես ես էի պատկերացնում, հայտնվում էի յոթերորդ երկնքում, իսկ երբ չէր ստացվում՝ «զլորվում» էի անդունդը: Իհարկե հասկանում էի, որ մեծ երաժիշտների համար հեշտ չէր, անսովոր իմ շարադրանքը ընթերցելը և երաժշտականացնելը: Բազմաթիվ փորձերց հետո, վերջապես եկավ այն օրը, երբ Ջարեհ Սահակյանը հայտարարեց, որ կվարտետը բողմենլու է ցնցող տպավորություն».

2-րդ լարային Կվարտետի մասին իր հուշերում, այսպես է արտահայտվել Ա. Ոսկանյանը:



Ջարեհ Սահակյանի խոսքը հաստատվել է ժամանակի ըննությամբ, դեռ այն ժամանակ 1-ին կուրսի ուսանողուհի, երաժշտագետ Գոհար Շաղոսյանը գրել է իր գրախոսականում այդ երկի մասին, կոնսերվատորիայի պարի թերթի համար (հողվածը գրված էր հայերենով և պարսկալեզուներով էր կոնսերվատորիայում հայերեն փառագրական մեքենայի եղել, ուշացումով էին փրեղյակ պահել հեղինակին և այն լույս չբեռնավ, այժմ մեջբերենք). «Ժամանակի փորձությունն արդեն անցել է վերահաստատաելու

գրած դեռ 1979-ին հիացական խոսքերը Արզաս Ոսկանյան նորարարի մեկնաբանումների, կվարտետային ժանրի հայկական զարթոնքի ու կայացման շրջանում նրա ասված խոսքի, հայ մարդու տեսակի ու մտածելակերպի մասին: Առաջին իսկ հնչյուններից մենակատարող գործիքների մուտքերով հենց հիացրեց ունկնդրին: Ա. Ոսկանյան կոմպոզիտորի անհատականությունը հայկական մշակույթի նուրբ ու համազիչ, նաև ավանդույթների քաջ գիտակի ընկալման առանձնահատկությունն է»:

Երևի թե երաժշտության պարմության մեջ սակավ հանդիպող դեպքերից է, երբ սրեղծագործության առաջին կատարումը (մինչև օրս միակն է) ոչ միայն հասկացվում է, այլև միահամուռ արժանանում է ամենաբարձր գնահատականի, որոնցից մեջբերումներ կանենք սարրել:

«Вот почему обращение к живому человеческому чувству всегда столь привлекательно. Именно это качество отличает Второй струнный квартет Арзаса Восканяна, отмеченный глубиной и искренностью высказывания, В сочинении, удивительно цельном по форме, развиты и оригинально претворены традиции Комитаса. Слушая музыку квартета ощущаешь её национальную почвенность: музыкальная ткань, лишенная прямых цитат, пронизана интонациями ашугских и шараканов, свободно переосмысленных». Н. Зуб, Евз. Баранкин (2. С. 75).

Երաժշտագետ, պրոֆեսոր Ռաֆայել Սրեկիանյանը գրում է. «Ա. Ոսկանյանի լարային 2-րդ կվարտետի առնչությամբ կուզենայի կանգ առնել մի մասնավորության վրա: Դրա վերջին հատվածը գրված է պուանտիլիստական տեխնիկայի հանգով, ընդ որում դրա առավել ակնբախ ու պատասխանատու հնչողությամբ: Նման պուանտիլիզմն իր արդարացումը կարող է գտնել միայն առանձնահատուկ հոտառության, տակտի ու վարպետության առկայությամբ: Եվ լիովին գտել էր վառ ազգային այդ ստեղծագործության մեջ» (3. էջ 30-31):

Երաժշտագետ Եվգենիա Գիլինան գրում է. «Ինքնատիպ գործ է Արզաս Ոսկանյանի Պոեմը (խոսք՝ Պարույր Սևակի) երգչախմբի համար և 2-րդ լարային Կվարտետը: Կարևորն այն է, որ հենվելով միջնադարյան մոնոդիաների վրա, գտնելով այնտեղ բազմաձայն զարգացման աղբյուր, հեղինակը, ասես, հայտնագործել է Ոսկյա հանքերակե՝ ազգային երաժշտության զարգացման մինչ այդ անհայտ ուղիներ: Եվ հաջողությամբ ընթանում է այդ ճանապարհով» (4. էջ 23):

Վիլնյուսից երաժշտագետ Ջիրա Կելմիցկայրեի (Վիլնյուս) կարծիքը. «Օրինակ, Արզաս Ոսկանյանի լարային 2-րդ կվարտետը խմբերգային գործերն ունկնդրելիս մեզ թվաց, որ լսում ենք իսկական հայկական երաժշտություն և ոչ թե այսպես ասած, ընդհանուր երաժշտություն, որը կարող է պատկանել թե՛ լիտվացի, թե՛ լատիշ, թե՛ դազախ, թե՛ ուկրաինացի կամ էլ մեկ ուրիշ ազգի կոմպոզիտորի գրչին» (5. էջ 28):

Կոմպոզիտոր, սրեղծագործական երիտասարդության հետ փարվող աշխարհների համամիութենական հանձնաժողովի պարասխանաարու քարտուղար Իգոր Կրասիլնիկովը (Մոսկվա) բնութագր-

րում է. «Ոսկանյանի թ. 2 լարային կվարտետի երաժշտությունը վառ ազգային է, որին ամենին էլ չի վնասել, որ հեղինակը դիմել է ժամանակակից տեխնիկային» (6. էջ 27):

Արվեստագիտության դոկտոր Աննա Արևշապյանը ժամանակին գրել է. «Վերջին տարիներին հետաքրքիր է աշխատում Արգաս Ոսկանյանը, որն իր ստեղծագործության մեջ կիրառում է աշուղական երաժշտության ինտոնացիաներ, ինչպես նաև ժողովրդական գործիքների հնչողությունն օգտագործելու հաջող փորձեր է անում: Ջգացվում է, որ կոմպոզիտորը գտել է իր .ոսկու հանքերակրե, ներշնչանքի իր աղբյուրը, որի բարերար ազդեցությունն ակներև է այժմ իսկ: Նրա հաջող որոնումների վկայությունն են 2-րդ լարային կվարտետն ու երգչախմբի Պոեմը՝ դիտի նվագակցությամբ (Պարույր Սևակի տեքստով): Կվարտետն անկեղծ, սրտասուչ ստեղծագործություն է՝ նվիրված ընկերոջ հիշատակին: Այս երկը պլենումի առավել աչքի ընկնող երկերից էր նաև ձևի սեղմության և ամբողջության իմաստով: Ժողովրդական հարվածային գործիքի հնարամիտ օգտագործման շնորհիվ հուզական յուրօրինակ երանգավորում է ստացել սիրո և կյանքի մասին պատմող խմբերգային պոեմը» (7. էջ 33):

Արվեստագիտության դոկտոր Կարինե Ջաղացյանյանը ժամանակին գրել է. «Կոմսերվատորիան ավարտած կոմպոզիտորների (Հայաստանի կոմպոզիտորների միության անդամների) երկերից ուզում եմ առաջին հերթին հիշել Արգաս Ոսկանյանի Լարային կվարտետն ու կամերային երգչախմբի համար գրված «Պոեմը» (Պ. Սևակի տեքստով): Ոսկանյանը, ըստ իս, գտել է ազգային մոտենալու նոր տեսանկյուն: Այսպես, մոնոդիայի տեմբրոինտոնացիոն յուրօրինակ պոլիֆոնիզացիան նորովի է շարունակում Կոմիտասի ավանդույթները» (8. էջ 26):

Երաժշտագետ Խորեն Թոռջյանը գրում է. «Նշանակալից գործերի շարքին պետք է դասել կոմսերվատորիայի ուսանող Ստեփան Լուսիկյանի և երիտասարդ կոմպոզիտոր Արգաս Ոսկանյանի լարային կվարտետները: Գործեր, որոնք աչքի են ընկնում հստակ ձևակառուցմամբ, ներքին ջերմությամբ, անկեղծությամբ ու վարակիչ տրամաբարությամբ: Դրանք, Ինչպես նաև Ոսկանյանի ու Չաուշյանի խմբերգերը (որ կոմսերվատորիայի կամերային երգչախումբը կատարեց գեղարվեստական բարձր մակարդակով, հարուստ ու համոզիչ ներբերանգներով) գալիս են հաստատելու, որ գործ ունենք հասունացած ու ձևավորված ստեղծագործողների հետ:

Ոսկանյանի կվարտետի մեջ (եթե գրողի և կոմպոզիտորի համեմատությունը թույլատրելի է) ինչ-որ բակունցյան բան կա՝ թարմ, հյութեղ կոլորիտով, կենդանի, շոշափելի երաժշտական կերպարներ, ինքնատիպ երաժշտական լեզու, որը սևահողի բույր ունի» (9. էջ 35):

Հեղաքրքիր է Թբիլիսիից կոմպոզիտոր Էլիզբար Լոնդարիչեի կարծիքը. «Կամերային երաժշտությունից առավել ուշագրավ էին հետևյալ ստեղծագործությունները: Արգաս Ոսկանյանի 2-րդ լարային կվարտետը: Այստեղ այդ երկի մասին արդեն

շատ խոսվեց: Կաշառում է հեղինակի անկեղծությունը և նրա նորովի մոտեցումը այդ դասական ժանրին: Ոսկանյանն անկասկած շնորհալի կոմպոզիտոր է: Նրա երաժշտական լեզուն սնվում է հայ ժողովրդական երգի ակունքներից, ներթափանցված է նրա ռիթմով: Դա հաստատեց նաև նրա խմբերգային պոեմի մեծ հաջողությունը» (10. էջ 34):

Նոր լարային կվարտետ արեղծելու հոգևոր մղում Ա. Ոսկանյանը ունեցել է երկրորդից՝ փառը փարի անց՝ 1985 թվականին: Այդ ընթացքում նա գրել էր մի շարք արեղծագործություններ, որոնց հնարավոր է ծանոթանալ www.arzasvoskanyan.com կայքում:

Այնուամենայնիվ առանձնացնենք նրա շեփոների համար (1983 թ.) և կլառնետների համար (1984 թ.) գրված կվարտետները, որոնց կանդրադառնանք այլ առիթով և իհարկե սկսել և ընթացքի մեջ էր ջութակի և սիմֆոնիկ նվագախմբի համար արեղծվելիք Կոնցերտը (1989 թ.):

3-րդ լարային կվարտետը գրված է առաջին ջութակի մենանվագով վերնագրվում է «Տերյանական» և նվիրված է ականավոր ջութակահար կվարտետային երաժշտության մեծ նվիրյալ Կոմիտասի անվան լարային քառյակի առաջին ջութակահար Էդվարդ Թադևոսյանին: Այն կարարվել է 1987-ին Երևանում Կոմիտասի անվ. լարային քառյակի հերթական համերգի ընթացքում և Դիլիջանում Ա. Ոսկանյանի հեղինակային համերգի ժամանակ:



Ի դեպ Դիլիջանյան համերգում հնչել են նաև թավջութակի և դաշնամուրի ու ալտի մենանվագ Սոնարները, քառյակի անդամներ թավջութակահար Ֆելիքս Միմոնյանի մասնակցությամբ և ալտահար Հակոբ Պապյանի մենակատարմամբ 3-րդ լարային կվարտետի դիլիջանյան կատարման առիթով 1988 թ. հունիսի 8-ին լույս տեսած «Իմպուլս» օրաթերթում, հոդվածագիր Օնիկ Սարգսյանն սիրով և քննադատությամբ գրում է. «Այնուհետև քննախարակ են բարչրանում Կոմիտասի անվան լարային քառյակի անդամներ ՀՄՄՀ Ժողովրդական արտիստ, միջազգային մրցանակաբաշխության դափնեկիր Է. Թադևոսյանը (1-ին ջութակ), Անդրկովկասյան մրցանակաբաշխության դափնեկիր Ս. Հախնազարյանը (2-րդ ջութակ), ՀՄՄՀ վաստակավոր արտիստ Հ. Պապյանը (ալտ) և ՀՄՄՀ վաստակավոր արտիստ Ֆ. Միմոնյանը (թավջութակ):

Հրաշալի քառյակի կատարմամբ հնչեց Լարային 3-րդ կվարտետն առաջին ջութակի մենանվագով: Ունկնդիրը երկար ծափահարություններով ու մեծ ջերմությամբ ընդունեցին այդ կատարումը:

Վերջերս երկարատև ընդմիջումից հետո 3-րդ լարային կվարտետը Արամ Խաչատրյանի անվ. համերգասրահում հնչեցրեց «Ակն» լարային քառ-

յակը (մենսակարար՝ առաջին ջութակ Թերեզա Նազարյան), հեղինակին բերելով մեծ հաջողություն և բարձր գնահատականներ:

Արգաս Ոսկանյանի 4-րդ լարային Կվարտետին նվիրված վերլուծական ծավալուն հոդվածով ժամանակին հանդես է եկել երաժշտագետ Տաթև Ամիրջանը, որը որոշ կրճարումներով նպատակահարմար գրանք ներկայացնելու չէր ուշադրությանը:



Ժամանակակից հայ երաժշտության ուղեծրում Արգաս Ոսկանյանը զբաղեցնում է խիստ ինքնատիպ և անկրկնելի մի խորը:

Երգիչ, կոմպոզիտոր և ազգագրագետ, որը իր ողջ սրբեղծագործական պրակտիկայում առնչվում է հայ հոգևոր երաժշտության հետ և պատահական չէ, որ նրա երաժշտական լեզուն հակված է միջնադարյան մեղեդիական մրաժողոթյանը:

Իր սրբեղծման ժամանակ և հանգամանքներով հետաքրքիր ու բովանդակալից է կոմպոզիտորի 4-րդ լարային կվարտետը, որը կրում է «Հայաստան 88» խորհրդանշական անվանումը: Եվ պետք չէ հայ լսարանին բացատրել, թե ինչ է նշանակում «Հայաստան 88»-ը՝ դա և երկրաշարժ է և շարժում է, և մեր արդի փառապալից ու դժվարին ինքնահասարակման ուղու սկզբը: Այս առումով պետք է նշել, որ 4-րդ Կվարտետը մյուսների համեմատությամբ սրբեղծագործական երկար ու փառապալից ձևավորման ճանապարհ է անցել:

Կվարտետը ունեցել է 2 փարբերակ: Սկզբնական շրջանում կոմպոզիտորը մրադրվել է այն սրբեղծել երրորդ կվարտետի օրինակով՝ այս անգամ մենսավագող ալտի՝ Չարեհ Սահակյանցի մենսավագման համար: Սակայն սրբեղծագործական պրոցեսի ընթացքում կոմպոզիտորն ինքսրինքյան փոխել է մրադրությունը՝ հրաժարվելով որևէ գործիքի առավելություն փայլուց: Քանզի ինչպես նշում է հեղինակը, նրա լեզվական միջոցները հիմնված են չայների շերտային մեղեդիական շարադրման վրա, որը հեղինակի շեռագրի և մրաժողոթյան կարևոր բաղադրիչներից է:

Եռամաս 4-րդ լարային Կվարտետի խոհափիլիսոփայական 1-ին մասի հակադրվում է ցիկլի դինամիկ կուլմինացիա հանդիսացող երկրորդ հոգեվիճակին «ռազմական»՝ առնական մասը, որտեղ կոմպոզիտորը դիմել է պարի ժանրին, որպես հայ ժողովրդի մեծ ուժի և անկորում կամքի խորհրդանշան:

Կվարտետի ողբերգական շեշտը կրող երրորդ մասը, որը հեղինակն անվանել է «սգո», ունի փոքրիկ կողմ, որով եզրափակվում է ամբողջ ցիկլը հակիրճ աղոթքի ձևով, որն ի դեպ ամենահարազարն է իր մրաժողոթյամբ կոմպոզիտորին և որը բոլոր-

վին ինասարափոխում է ամբողջը, վերահիմաստավորում շեշտերը: Ու ինչպես յուրաքանչյուր աղոթք իր մեջ պարփակում է և՛ լույս, և՛ հավատ, և՛ սեր:

Կոմպոզիտորի լեզվական շարադրանքի միջոցները բոլոր չորս կվարտետներում նույնն են: Հեղինակը մեղեդին փարածության մեջ բաժանելու, փարբեր չայների վրա ցրելու, դիստանսիոն հնչողությամբ փարբեր շերտեր ստանալու միջոցով, սրբեղծում է պոլիփոնալ էֆեկտ:

Կոմպոզիտորի երաժշտալեզվական ուրույն առանձնահատկությունները ժողովրդական և հոգևոր երաժշտության ասպարեզում ունեցած մեծ վարպետության վկայությունն են, քանզի իր կվարտետում նա ավելի շար առաջնորդվում է ազգային երաժշտության օրինակափոխություններով:

Այսպիսով Ա. Ոսկանյանը իր կվարտետներում կերպարում է կոմպոզիտորական միջոցների իր օրինակափոխությունները, որոնք գրկված են սեփական որոնումների արդյունքում և ազգային խորն իմացության գիտակցությամբ:

Ինչպես հեղինակը նշում է՝ հայ երաժշտությունն իր շեշտադրությամբ խիստ կապված է հայոց լեզվի, նրա ելևէջների հետ: Կոմպոզիտորն իր երաժշտական մրբերը քաղում է այդ ելևէջներից և նրա երաժշտության մեջ միջոց առկա է հայոց խոսքի կրճռաչափը: Ըստ նրա, որքան հին է հայոց լեզուն, այնքան էլ նրա երաժշտության ակունքներն են:

Ելնելով այս ամենից կարելի է եզրակացնել, որ հայկական կամերային արվեստում Ա. Ո. Ոսկանյանն առանձնանում է կվարտետի ժանրի նոր, յուրովի մեկնաբանմամբ, որտեղ գործիքային անամբըր ներկայանում է երգային և պարառիթմային մրաժողությամբ վերահիմաստավորված, ինչն իր հետ համապատասխանաբար կյանքի է կոչում երաժշտաարտահայտչական մի ամբողջ համակարգ:

Ավելացնենք, որ Արգաս Ոսկանյանի 4-րդ լարային Կվարտետը մեծ վարպետությամբ և սիրով կատարեց Էդիտա Ավագյանի (I ջութակ) գլխավորությամբ, ԵՊԿ աղջիկների լարային քառյակը: Այն հնչեց ռադիոյով, հեռարձակվեց հեռուստատեսությամբ բազմաթիվ անգամ:

Այսքանով չի ավարտվում Ա. Ո. Ոսկանյանի կվարտետային շարադրանքների ցանկը: Ինչպես վերը նշեցինք շեփոնների և կլարնետների կվարտետների առկայության մասին, նա գրել է նաև «Եղերեգ» 4 քավչութակի համար, որում սզվում է Վազգեն վեհափառի մահը:

Այս երեք յուրօրինակ կվարտետներին կանդրադառնանք առաջիկայում, նաև՝ այլ հետաքրքիր փաստերի, որոնք տեղ չեն գրել ներկա հոդվածում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Կիրակոսյան Ա. Ա., Արգաս Ոսկանյան կոմպոզիտորը և հայ երգեցողության դարձը, Եր., Անահիտ., 2008 թ.: Kirakosyan A. A., Voskanyan kompozitore ev hay ergetzoghutyany dprozce, Yer., Anahit., 2008 t.
2. Зив Н., Баранкин Е., Музыка молодых., //Советская музыка 11. 1979 г. С. 72-75. Ziv N., Barakin E., Muzyka molodykh., //Sovetskaya muzyka., 11, 1979 g., С. 72-75.
3. Սրբեղծական Ռ. Հ., Արդիականություն՝ առաջ ձևական

- առիթուների, //Սովետական արվեստ, 8. 1979 թ., էջ 28-31: Stepanyan R. H., Ardiakanutyun - arantz dzevakani atributneri, //Sovetakan arvest 8. 1979 t., ej 28-31.
4. *Գիլինա Ե. Ի.*, Երաժշտության հասցեստերը ունկնդիրն է //Սովետական արվեստ, 8. 1979 թ., էջ 20-23: *Gilina E. I.*, Yerazhshtutyani hastzetern unknidim e., //Sovetakan arvest 8. 1979 t., ej 20-23.
 5. *Կելմիցկայտե Զ.*, Սպասում ենք ազգային բնավորության արտահայտությանը, //Սովետական արվեստ, 8. 1979 թ., էջ 27-28: *Kelmitzkayte Z.*, Spasum enq azgayin bnavorutyani artahayutyane, //Sovetakan arvest 8. 1979 t., ej 27-28.
 6. *Կրասիլնիկով Բ.*, *Կերպարային ընդարձակ սպեկտրի առավելությունը*, //Սովետական արվեստ, 8. 1979 թ., էջ 27: *Krasilnikov B.*, Kerparayin endardzak spektori aravelutyane, //Sovetakan arvest 8. 1979 t., ej 20-23.
 7. *Արևշատյան Ա. Ա.*, Թերությունները կարելի է հաղթահարել, //Սովետական արվեստ, 8. 1979 թ., էջ 32-33: *Arevshatyan A. S.*, Terutyunnere karceli e haghthaharel., //Sovetakan arvest 8. 1979 t., ej 32-33.
 8. *Ջաղացակյան Կ. Ա.*, Ինչու չի զարգանում երաժշտական նյութը, //Սովետական արվեստ, 8. 1979 թ., էջ 25-27: *Jaghatzpanyan K. A.*, Inchu chi zarganum crazhshtakan nyute, //Sovetakan arvest 8. 1979 t., ej 25-27.
 9. *Թոռչյան Խ.*, Նորարարությունը նպատակ չէ, //Սովետական արվեստ, 8. 1979 թ., էջ 34-36: *Torjyan Kh.*, Norararutyunc npatak che, //Sovetakan arvest 8. 1979 t., ej 34-36.
 10. *Լոնդարիճե Է.*, Նուրբ ճաշակ, բարձր պրոֆեսիոնալիզմ, //Սովետական արվեստ, 8. 1979 թ., էջ 34: *Londaridze E.*, Nurb dchashak, bardzr profesionalizm//Sovetakan arvest, 8. 1979 t., ej 32-33.

Բանալի-քառեր. դիրիժոր, լարային կվարտետներ, Արզաս Ոսկանյան, Է. Միրզոյան, ակադեմիական դաստիարակություն:
Ключевые слова: дирижер, струнные квартеты, Арзас Восканян, композитор, Э. Мизоян, академическое воспитание.
Keywords: conductor, string quartets, Arzas Voskanyan, E. Mirzoyan, Academic Education

Տեղեկություններ հեղինակի մասին. ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐԶԱՍ ԳՐԻԳՈՐԻ (ծնվ. է 22.02.1975թ.): 1982-1992 թթ. սովորել է Երևանի Ն. Ադրայանի (Կրուսկայա) անվան հանրակրթական դպրոցում, զուգահեռ ուսուցանել Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրի և շեփոթի դասարաններում: 1992-1997 թթ. ուսումը շարունակել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հարվածային գործիքների և ազգային նվագարանների նվագախմբի նվագավարի (դիրիժոր) դասարաններում: 1997-1998 թթ. ծառայել է Հայաստանի Հանրապետության ազգային բանակում, որպես զինվորական նվագախմբի դիրիժոր: 1998-2002 թթ. սովորել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի օպերային-սիմֆոնիկ դիրիժորության դասարանում, այնուհետ 2004 թ. գերազանցությամբ ավարտել ասպիրանտուրայի նույն բաժինը՝ ակադեմիկոս դիրիժոր Յուրի Գավրյանի ղեկավարությամբ: 2002թ. հիմնադրել է «Երևան» պատանեկան կամերային նվագախումբը: Գ. Ոսկանյանի գլխավորությամբ «Երևան» պատանեկան կամերային նվագախումբը ունեցել է բազմաթիվ արտասահմանյան հյուրախաղեր, ինչպես նաև 2004թ-ին Շոտլանդիայում իրականացվել է Մոցարտի «Կախարդական սրինգ» օպերայի բեմադրությունը: 1998թ-ից դասավանդում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: 2004թ-ից գերազանցությամբ ավարտել է զինվորական դիրիժորության բաժնի պատասխանատու: 2011թ-ին արժանացել է ղոցենտի կոչման: Գ. Ոսկանյանը կազմել, խմբագրել և հրատարակել է նվագախմբային պարտիտուրաներ, երաժշտական բազմազան գրքեր: Մեծ են Գ. Ոսկանյանի հետաքրքրասիրությունների շրջանակները. ճարտարապետաշինարարական, իրավական և տնտեսական, որոնց հետ շփվել է ուղղակի և անհրաժեշտաբար: 2016թ. նշանակվել է «Թ. Աբրունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական փաստակավոր համույթ» ՊՈԱԿ-ի տնօրեն, որտեղ նրա ղեկավարության ներքո կայացել են բազմաթիվ համերգներ (100-ից ավել) թե Հայաստանի Հանրապետությունում, թե Արցախում, և թե արտ. երկրում (Թուրքիա և Իրան): Գ. Ոսկանյանը ունի ՀՀ քաղաքական ծառայողի բարձրագույն դասի որակավորում: Ամուսնացած է, ունի երկու որդի:

Сведения об авторе: ВОСКАНЯН ГРИГОР АРЗАСОВИЧ (род. 22. 02. 1975). С 1982 по 1992 год учился в средней школе N 19 им. Н. Агбалаяна /Н.Крупской/г. Еревана, параллельно проходил обучение в музыкальной школе им. Саят-Новы в классах фортепиано и трубы. С 1992 по 1997 год продолжил учебу в Ереванской государственной консерватории им.Комитаса по классу ударных инструментов и руководителя /дирижера /оркестра национальных инструментов. С 1997 по 1998 год служил в рядах национальной армии Республики Армения в качестве дирижера военного оркестра. С 1998 по 2002 год учился в Ереванской государственной консерватории им. Комитаса по классу оперно-симфонического дирижирования, затем в 2004 году под руководством проф. Ю. Давтяна с отличием окончил аспирантуру. В 2002 году основал Молодежный камерный оркестр “Ереван”, который участвовал в многочисленных зарубежных гастролях, а в 2004 году в Шотландии состоялась постановка оперы Моцарта “Волшебная флейта”. С 1998 года преподает в Ереванской государственной консерватории им. Комитаса. С 2004 года является ответственным факультета военных дирижеров. В 2011 году получил звание доцента. Г. Восканян составил, отредактировал и опубликовал множество произведений, оркестровые партитуры. В 2016 году назначен директором Государственного ансамбля песни и танца Армении им. Алтуняна, под его руководством состоялось более ста концертов как в Армении, так и в Арцахе и зарубежом, в частности, в Турции и Иране.

Information about the author: VOSKANYAN GRIGOR ARZAS (born 22.02.1975). From 1982 to 1992 studied at Yerevan Secondary school after N.Aghbalyan (Krupskaya), he studied parallel piano and trumpet classes at Sayat-Nova Music School. 1992-1997 he continued his studies at the YSC in the Percussion Instruments and Folk Instruments Orchestra (Conductor) classes. 1997-1998 Served as a Conductor of the Military Orchestra in the National Army of the Republic of Armenia. From 1998 to 2002 he studied at the YSC in the of Opera and Symphony conductor class, and then in 2004 he graduated the same course of Postgraduate studies headed by prominent conductor Yuri Davtyan. 2002 he established “Yerevan” Youth Chamber Orchestra. Under the guidance of G.Voskanyan, the Yerevan Chamber Orchestra had many foreign tours, as well as a performance by Mozart’s “Magic Swing” opera in Scotland in 2004. Since 1998 he has been teaching at YSC. Since 2004, he has been responsible for military conductor. In 2011 he was awarded the title of associate professor. G. Voskanyan compiled, edited and published orchestral performances and various musical books. G. Voskanyan’s interests in architectural construction, legal and economic which he needed to be involved in, are unlimited and great. 2016 appointed the director of the State Song-Dance Ensemble of Armenia named after T. Altonyany SNCO, where under his leadership there were many concerts (more than 100) in the Republic of Armenia, Artsakh and abroad (Turkey and Iran). G. Voskanyan has the highest qualification of the Armenian political officer. He is married and has two son.

Րեզյումե

Дирижер, преподаватель ЕГР Григор Арзасович Восканян. - “Струнные квартеты Арзаса Восканяна” .

Статья дает возможность читателю ознакомиться с одной из важнейших частей всего наследия композитора Арзаса Восканяна, с историей создания и исполнения каждого из квартетов, а также полученными отзывами. Автор статьи анализирует приемы уникально-единичного изложения, которые обеспечивают неповторимые “арзасовские” созвучия, представляющие высокохудожественную ценность.

Summary

Conductor, pedagogue of YSC Grigor Arzas Voskanyan. - “Arzas Voskanyan String Quartets”.

Article gives readers an opportunity to get acquainted with the details of the creation and execution of each of the string quartets, which are an important part of the composer's creative heritage. In addition, the author of the article perceives the nuances of composer Arzas Voskanyan's unique composition and mentions his exceptionalness. As a result, it's created Arzasyan's high-value sounds.